

**Ա Ր Ջ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**  
**Երևանի պետական համալսարանի**  
**Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի**  
**2016 թ. հունվարի 15-ին կայացած թիվ 6 նիստի**

Օրակարգում`

- Հայցորդի ձևակերպման հարցը
- Անվանական կրթաթոշակների հարցը

Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի 40 անդամներից նիստին ներկա էին 33-ը:

- Հայցորդի ձևակերպման հարցը

ԼՍԵՑԻՆ` «Արարատ» սննդի կոմբինատ ՍՊԸ-ի թեյի արտադրամասի պետ, կենդանաբանության ամբիոնի նախկին շրջանավարտ Վաղիմ Վյաչեսլավի Հարությունյանին կենդանաբանության ամբիոնում որպես հայցորդ ձևակերպելու հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ` կենդանաբանության ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., Մ.Ս.Առաքելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ` հաշվի առնելով ամբիոնի կարծիքը` միջնորդել ԵՊՀ ռեկտորատի առջև Վաղիմ Վյաչեսլավի Հարությունյանին կենդանաբանության ամբիոնում հայցորդ ձևակերպելու համար :

- Անվանական կրթաթոշակների հարցը

ԼՍԵՑԻՆ` Լևոն Օրբելու անվան անվանական կրթաթոշակի շնորհման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ` կենսաբանության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս.Գևորգյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ` Լևոն Օրբելու անվան կրթաթոշակը այս տարի ևս հատկացնել կենսա-բանության ֆակուլտետի մագիստրատուրայի «Գենետիկա և բջջաբանություն» մասնագիտացման երկրորդ կուրսի ուսանող Պարզև Արարատի Հովհաննիսյանին` հաշվի առնելով նրա բարձր

առաջադիմությունը և ակտիվ մասնակցությունը գիտահետազոտական  
և հասարակական աշխատանքներին:

ԼՍԵՑԻՆ՝ Նորայր Սիսակյանի անվան անվանական կրթաթոշակի շնորհման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ Կենսաբանության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ,  
պրոֆ. Է.Ս.Գևորգյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ն. Սիսակյանի անվան կրթաթոշակը այս տարի ևս հատկացնել  
Կենսաբանության ֆակուլտետի մագիստրատուրայի «Ընդհանուր և բժշկական  
կենսաքիմիա» մասնագիտացման երկրորդ կուրսի ուսանողուհի Մարիամ Սամվելի  
Սարգսյանին՝ հաշվի առնելով նրա բարձր առաջադիմությունը և ակտիվ մասնակցությունը  
գիտահետազոտական և հասարակական աշխատանքներին:

Գիտական խորհրդի նախագահ՝  
ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, պրոֆ.

Է.Ս.Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ դոցենտ

Ա.Ֆ.Կարապետյան